ԿԱՐԵՎՈՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԾԱՆՐԱՇԱՐԺ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՎՃԱՐԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Լոս Անջելեսի քաղաքապետարանը առաջարկում է բարձրացնել բազմաբնակարան շենքերի համար նախատեսված ծանրաշարժ իրերի վճարի սակագները: Այս վճարը նախատեսված է Լոս Անջելեսի բազմաբնակարան շենքերում ծանրաշարժ իրերի հավաքման ծառայության համար՝ մաքուր համայնքների, պաշտպանված միջավայրի և վնասների նվազեցման առավելություններն ապահովելու համար: Օգնություն կարելի է տրամադրել այն ընտանիքներին, որոնք կարիքավոր են:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Լոս Անջելեսում բազմաբնակարան շենքերի սեփականատերերից, վարձակալներից կամ բնակիչներից, որոնք ենթակա չեն քաղաքի պինդ ռեսուրսների վճարին, գանձվում է բազմաբնակարան շենքերի համար նախատեսված ծանրաշարժ իրերի վճար: Բազմաբնակարան շենքերի համար նախատեսված ծանրաշարժ իրերի վճարը չի ավելացել 2007 թվականից ի վեր, և հավաքագրված եկամուտները չեն ծածկում ամբողջ ծառայության ծախսերը: Այս սակագների համապատասխանեցումը կօգնի ապահովել ծանրաշարժ իրերի հավաքագրման ծառայությունների համար անհրաժեշտ ֆինանսավորումը՝ բազմաբնակարան շենքերի մեր հարկատուների համար: Եթե այն ընդունվի, քաղաքապետարանը տարեկան սակագների համապատասխանեցումները կսկսի 2025 թվականի աշնանից մինչև 2029 թվականի ամառը: Առաջարկվող սակագները տե՛ս մյուս կողմում:

ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ, ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Քաղաքապետարանում գործում է հերթապահ ծառայություն, հավաքելու համար ձեր ծանրաշարժ իրերը, ինչպիսիք են՝ բազմոցները և այլ կահույքը, ներքնակները, դռները, գորգերը, զուգարանակոնքերը, էլեկտրական թափոնները և կենցաղային տեխնիկան: Այս ծանրաշարժ իրերը հավաքվում, տեղափոխվում, վերամշակվում և/կամ անվտանգ կերպով հեռացվում են: Բազմաբնակարան շենքերի համար ծանրաշարժ իրերի հավաքման անվտանգ, հուսալի և արդյունավետ ծրագիր իրականացնելու և պահպանելու, ինչպես նաև հանրային առողջությունը, շրջակա միջավայրը և Լոս Անջելեսի համայնքները պաշտպանելու համար անհրաժեշտ են բավարար եկամուտներ՝ վնասների ազդեցությունը նվազեցնելու միջոցով:

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԻՔԱՎՈՐ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ

Ձեր ընտանիքը հնարավոր է իրավասու լինի ստանալու ֆինանսական օգնություն՝ առաջարկվող վճարի բարձրացման հետևանքները փոխհատուցելու համար: Բազմաբնակարան շենքերի ծանրաշարժ իրերի վճարի 31.25% զեղչը հասանելի է ցածր եկամուտ ունեցող իրավասու հաճախորդների համար: Վճարից 100% ազատում հասանելի է որակավորված Lifeline հաճախորդների համար: Ֆինանսական օգնությունը կշարունակվի Lifeline-ի կամ ցածր եկամուտ ունեցող հաճախորդների օգնության ծրագրում (EZ-SAVE) գրանցված հաճախորդների համար: ՆՈՐ հաճախորդները կարող են գնահատել իրենց որակավորումները Lifeline ծրագրումկամ ցածր եկամուտ ունեցող հաճախորդների օժանդակության ծրագրում գրանցվելու համար, կամ օգնություն ստանալ՝ որոշելու, թե որն է իրենց համար ամենահարմարը՝ այցելելով հետևյալ կայքը՝
LADWP.com/financialassistance: Խնդրում ենք նկատի ունենալ, որ հաճախորդները կարող են գրանցվել միայն Lifeline ծրագրում ԿԱՄ ցածր եկամուտ ունեցող հաճախորդների օգնության ծրագրում:

ԿԱՐԵՎՈՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԾԱՆՐԱՇԱՐԺ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՎՃԱՐԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԾԱՆՐԱՇԱՐԺ ԻՐԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՄՍԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՍԱԿԱԳՆԵՐԸ

Քաղաքապետարանը Լոս Անջելեսի բազմաբնակարան շենքերում ապահովում է ծանր իրերի հավաքագրում, որոնք ենթակա չեն պինդ ռեսուրսների վճարին: Գլխավոր էլեկտրական հաշվիչին (էլեկտրական հաշվիչ, որը չափում է մեկից ավելի բնակելի միավորների էլեկտրաէներգիայի օգտագործումը) միացված բնակելի միավորի սեփականատերը պատասխանատու է այդ բնակելի միավորի համար նախատեսված բազմաբնակարանային շենքի ծանրաշարժ իրերի ամբողջական վճարի համար: Առանձին էլեկտրական հաշվիչին (էլեկտրական հաշվիչ, որը չափում է միայն այդ բնակելի միավորի էլեկտրաէներգիայի օգտագործումը) միացված բնակելի միավորի համար բազմաբնակարանայինի ծանրաշարժ իրերի վճարը հավասարապես բաժանվում է բնակելի միավորի սեփականատիրոջ և բնակչի/վարձակալի միջև: Եթե բնակելի միավորի պատկանելիությունը բազմաբնակարան շենքից առանձին չէ, ապա բնակելի միավորի սեփականատերը նշանակում է բազմաբնակարան շենքի սեփականատերը: Առաջարկվող ամսական սակագները մեկ միավորի համար նշված են ստորև բերված աղյուսակում:

ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ԾԱՆՐԱՇԱՐԺ ԻՐԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՄՍԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՍԱԿԱԳՆԵՐԸ

Էլեկտրաէներգիայի հաշվիչի տեսակ	Ընթացիկ	Աշուն 2025	Հուլիս 2026	Հուլիս 2027	Հուլիս 2028	Հուլիս 2029
Բազմաբնակարանային շենքերի ծանրաշարժ ապրանքների վճար – առանձին հաշվիչով բնակելի միավորի բնակիչ/վարձակալ (յուրաքանչյուր բնակելի միավորի համար)	$0.64	$1.52	$1.57	$1.60	$1.64	$1.67
Բազմաբնակարանային շենքերի ծանրաշարժ ապրանքների վճար – առանձին հաշվիչով բնակելի միավորի սեփականատեր (յուրաքանչյուր բնակելի միավորի համար)	$0.64	$1.52	$1.57	$1.60	$1.64	$1.67
Բազմաբնակարանային շենքերի ծանրաշարժ ապրանքների վճար – գլխավոր հաշվիչով բնակելի միավորի սեփականատեր (յուրաքանչյուր բնակելի միավորի համար)	$1.11	$3.04	$3.13	$3.20	$3.27	$3.34
Բազմաբնակարանային շենքերի ծանրաշարժ ապրանքների վճար ցածր եկամուտ ունեցող բնակիչների/ վարձակալների առանձին հաշվիչով բնակելի միավորների համար (31.25% զեղչ) (յուրաքանչյուր բնակելի միավորի համար)(за жилое помещение)	$0.44	$1.05	$1.08	$1.10	$1.13	$1.15

- Առավել տեղեկությունների համար այցելեք մեր կայքէջը՝ lacitysan.org/mbifrates2025
- Եթե հարցեր ունեք, ամենաարագ պատասխանները կստանաք ուղարկելով էլեկտրոնային նամակ հետևյալ հասցեին՝ sansrfrates2025@lacity.org
- Կարող եք նաև զանգահարել 1-800-773-2489 հեռախոսահամարին՝ ժամը 7:30-ից մինչև 17:30-ը:

Որպես «Ամերիկացիների հաշմանդամության մասին» օրենքի II վերնագրի ներքո ընդգրկված կազմակերպություն, Լոս Անջելեսի քաղաքապետարանը խտրականություն չի դրսևորում հաշմանդամության հիման վրա և, պահանջի դեպքում, կապահովի համապատասխան հարմարություններ՝ իր ծրագրերին, ծառայություններին և գործունեությանը հավասար հասանելիություն ապահովելու համար: Խնդրում ենք վեբինարից մեկ շաբաթ առաջ գրել sansrfrates2025@lacity.org էլեկտրոնային հասցեին՝ ձեզ անհրաժեշտ օգնությունը պահանջելու համար:

ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄ:

2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30
Առավոտյան ժամը 10:00-ին

Լոս Անջելեսի քաղաքապետարանի Ջոն Ֆերարոյի անվան խորհրդի դահլիճ,
Սենյակ 340
200 Նորթ Սփրինգ փողոց,
Լոս Անջելես, 90012

ԱՌԱՎԵԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝

218-րդ առաջարկի բողոքարկման և լսումների գործընթացի վերաբերյալ տեղեկությունների համար դիտեք 218-րդ առաջարկի ծանուցումը lacitysan.org/mbifrates2025 կայքում:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՎԵԲԻՆԱՐՆԵՐ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԾԱՆՐԱՇԱՐԺ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՎՃԱՐԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Լոս Անջելեսի Սանիտարական և շրջակա միջավայրի բաժինը առաջարկում է Zoom վեբինարներ առաջարկվող սակագների վերաբերյալ: Խնդրում ենք նախապես գրանցվել՝ այցելելով ստորև նշված հղումները կամ ստորև նշված QR կոդերով: Հանդիպումները կսկսվեն ժամանակին: Լսումները կձայնագրվեն և հասանելի կլինեն դիտման համար lacitysan.org/mbifrates2025 կայքում:

Չորեքշաբթի, 2025 թվականի օգոստոսի 27-ին, ժամը 18:00-ին

https://us02web.zoom.us/webinar/register/WN_GMvbWxR-R8ipZN6k9E6n1A

Շաբաթ, 2025 թվականի սեպտեմբերի 13-ին, ժամը 10:00-ին

https://us02web.zoom.us/webinar/register/WN_rOv1a6KtRRyB459TZd8Sbg